

# ՄՈՐԹԱՑԻՆ ԱՌՈՂՉԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Բ.

Այս է ահա վեր ի վերոյ կազմութիւնը մորթին, դոր պարզ աշքով դիտելով, անոր զուրով աղատ երեսին վրայ հեշտիւ կրնանք որոշել գանազան գիծեր՝ երկրաշափական զբեթէ բոլոր ձևերով. տեսնել ակօսիկներ, ցցուած մասեր; ինչպէս նաև քրտինք ու իւղ արտադրող գեղձիկներու բերաններ:

Մորթին գիծերը մեծ թէ փոքր; արդիւնք են միտերու յարաշարժ աշխատանքին. անոնք շատ որոշակի յայտնի են յօդերու մօտ, ինչպէս նաև երեսի ու ճակատի վրայ, ուր՝ ինչպէս զիտենք՝ խորշով և կնճիռ անուններով ճանչցուած են, և դէպի ծերութիւն անխուսափելիօրէն կատարուած ուղևորութեան ալ անջնջելի հետքերն են: Ակօսիկները կը շրջապատեն ցցուածքները և զիւրաւ նշմարելի են այն տեղուանքը, ուր ջղային վերջաւորութիւնները յոյժ առատ են ինչպէս ձևոքի պնակիտին մէջ և գլխաւորապէս մատներուն ծայրերը:

Մորթի ցցուածքները կը վերաբերին պրտկիկներուն, վերնամաշկը ինչպէս ըսի արդէն, անոնց վրայ կազապարուած ազուցուած ըլլալով ճզզիւ. անոնք կը վերաբերին նաև մազարմատներուն, որոնք՝ երբ ցուրտի և սարսուոի ազգեցութեան ենթարկուին, փուշի պէս կը տնկուին, տեսանելի կը լլան, փետոտուած հաւի մը մորթի տեսքն ստանալով: Մորթային մակերեւոյթը գեղձային բերանիկներով համակ ծածկուած է, այնպէս՝ որ մորթը կարելի է նմանցնել ծակուակէն նուրբ շղարշի, բայց զիտնալ պէտք է որ այդ գեղձաբերանիկները տեսանելի չեն, բացի ափին մէջ գտնուած քրտնազեղձներու և քիթի երկու թներուն վրայի իւղագեղձներու բերանիկներէն, որոնց առաջիններէն քրտինքի փոքրիկ չիթերու ծորիլը կարելի է նշմարել շատ անդամ, ինչպէս և երկրորդիններէն իւղի թանձրասպիտակ կաթիլներ քամիլ սեղմենով:

Մորթը բոլորովին ծածկուած է նաև մազերով, բայց տեղ տեղ այնպէս աննշմարելի, որ լերկ կը կարծուի, բայց սխալ է. բացի ձեռքի պնակիտէն և ոտքիններբանէն մարմնի մնացեալ մասերը լի են մազերով, որոնք տեղին համեմատ անուններ կը ստանան, ինչպէս յօնք, թարթիչ, պեղաբը, մօրու ևն.:

Մորթը թէկ կարծը, բայց շատ ալ առաձգական է, և անոր այդ առաձգականութեան պատճառաւ վիրապէտներ հնարած են մորթային պատրուաը (greffe epidermique) որով՝ սքանչելի ծածկոցներ կը յօրիննեն երբեմն այն տեղերուն, ուր մորթի մաս մը փճացած կորսուած ըլլայ: Մորթը հաստ է նաև, բայց այդ հաստութիւնը տեղ կը տարբերի, դոր օրինակ՝ ականջափողին մէջ և արտեանունքին

վրայ շատ նուրբ է, թափանցիկ, խոկ զիգի, կոնսակի ու անգամներու վրայ թանձր. թանձր է աշխատաւորներու ձեռքերուն մէջ, և այն ամէն աւելերու վրայ, որոնք արտաքին հարուածներէ պաշտպանուելու կը կարօտին, այս նպատակաւ է որ յառաջ կուզան ձեռքի ու ոտքի կոշտերը, այս նպատակաւ յառաջ Նկած Են Նզունզները, մորթի այդ զարժանալի արտագրութիւնը, որ ձեռքի և ոտքի ծայրը կեցած, չոշափման զգայրանքները կրող ոսկորներու պաշտպան վերթակը կը յօրինեն. Եղունդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ մորթի կտորուանք բայց աւելի կարծր, աւելի պինդ:

Վերը բար արդէն, թէ մորթի ներքին երեսը վակած է ճարպային հիւսուածքի մը և ասով ալ միսերու. այս ճարպային խաւի միջոցաւ է որ մորթի կ'ընդունի իր սննդառութեանը վերաբերեալ հիւթերը բերող անօթիկները (կրակ, շնչիքակ, աւշիքակ, ջիկ ևն.), որոնք սոզոսկերով կ'երթան յանդիլ մաշկի պատկիկներուն մէջ և կաղմել պտկակիծիկները: Ճարպային խաւէն մորթին անցնող սննդարեր անօթիկները եթէ ընդարձակ տարածութեան մը վրայ կարուելու կամ ջնջուելու ըլլան, մորթի այդ մասը արթնազուրկ և արթնատածութեանէ անջատաւած մնալով կ'ոչնչանայ խօստա, կը փառի ու կ'իշինայ:

ԲԺ. Վ. ՅՈՐԳՈՄԵԱՆ

## Թ Բ Զ Ա Փ Ռ Ի Տ Ե Լ

Նախ պէտք է զիտանալ թէ որչափ մարդ՝ այնչափ ստամոքս, աւելի ճիշտ, ստամոքսի ընդունակութիւններ կան և ինչպէս ստամոքսի զանազան հիւսնդութիւնները բժշկելու համար սնունդի զանազան կանոններ (régimes) կան, այնպէս նաև սոսոզ անձերը շատ մը հիւսնդութիւններէ պահպաներու համար կան սոսոզջապահական կանոններ, որոնց վրայ զազափար մ'ունենալու. համար պէտք է զիտանափ 1. Արշա՞փ ուտել. 2. ի՞նչ ուտել. 3. ի՞նչ է մարսողութիւնը. 4. ի՞նչ է իւրացումը (o s s i m i l a t i o n). 5. որո՞նք են սնունդի կանոնները (régimes) և անոնց աղէկ կամ գէշ կողմերը:

Այս անդամ պիտի ջանամ, շատ համառօտ, խօսիլ որչափ ուտելու մասին:

Ամէն անձ, նման ուրիշ արարածներու և բոյսերու, կը կորանցնէ ամէն օր մաս մը իր ծանրութեանէն, որու տեղը պէտք է՝ զրուի որոշ չափով սնունդ՝ հաւասարակշռութիւնը պահպաներու համար: Փորձերը ցոյց կուտան, որ ընական վիճակի մէջ, 30 տարեկան սոսոզ և զործունայ մարդ մը ամէն օր կը կորանցնէ 500 կրամ իր միսերէն և սպիտանիւթ պարուանակող միւս մտաերէն (արթւն և այլն). նաև մաս մը իր զիրութեանէն և 1200—1400 կրամ չուր՝ մէզի ճամբով,